ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շահումյան, (0322) 38462, 37897, shahumyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՀՈՒՆՎԱՐԻ 2020թվականի N 01-Ա

ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 Թ-Ի ՀՈՒՆՎԱՐԻ 24-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

Հաստատել Շահումյան համայնքի ավագանու 2020թ-ի հունվարի 24-ի նիստի օրակարգը.

ՕՐԱԿԱՐԳ

2020թ-ի հունվարի 24-ի թիվ 01 նիստի

1. ՀՀ Լոռու մարզի Շահումյան համայնքի 2020թ-ի բյուջեում փոփոխություններ կատարելու մասին:

2. Շահումյան համայնքի 2019 թվականի բյուջեի կատարման տարեկան և զարգացման հնգամյա ծրագրի իրականացման հաշվետվությունների մասին:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՔՈՒԼՅԱՆ ՍԵՎԱԿ

ԲԵԺԱՆՅԱՆ ԱՐԵՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԵԼԵՆԱ

ՂՈՒՄԱՇՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

Համայնքի ղեկավար՝ ԷԴԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շահումյան, (0322) 38462, 37897, shahumyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՀՈՒՆՎԱՐԻ 2020թվականի N 02-Ն

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020Թ-Ի ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական Ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, ,,Բյուջետային համակարգի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթներով՝ Շահումյան համայնքի ավագանին.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

Շահումյան համայնքի 2020թ-ի բյուջեում 24.01.2020թ-ին կատարել փոփոխություններ՝ համաձայն 1-5 հավելվածների:

1. Եկամուտների գծով

Ընդամենը - 78 136 300 /յոթանասունութ միլիոն մեկ հարյուր երեսունվեց հազար երեք հարյուր/ ՀՀ դրամ

այդ թվում՝

- վարչական բյուջեի մասով - **78 136 3**00 /յոթանասունութ միլիոն մեկ հարյուր երեսունվեց հազար երեք հարյուր/ ՀՀ դրամ
- ֆոնդային բյուջեի մասով - 0 /զրո/ ՀՀ դրամ

2. Ծախսերի գծով

Ընդամենը - 87 478 700 /ութսունյոթ միլիոն չորս հարյուր յոթանասունութ հազար յոթ հարյուր/ ՀՀ դրամ

այդ թվում՝

- վարչական բյուջեի մասով - **78 136 3**00 /յոթանասունութ միլիոն մեկ հարյուր երեսունվեց հազար երեք հարյուր/ ՀՀ դրամ
- ֆոնդային բյուջեի մասով - 9 342 400 /ինը միլիոն երեք հարյուր քառասուներկու հազար չորս հարյուր/ դրամ:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՔՈՒԼՅԱՆ ՍԵՎԱԿ
ԲԵԺԱՆՅԱՆ ԱՐԵՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԵԼԵՆԱ
ՂՈՒՄԱՇՅԱՆ ԱՐՄԵՆ
ՄԱՆՈՒԿՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

Համայնքի ղեկավար՝ ԷԴԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շահումյան, (0322) 38462, 37897, shahumyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՀՈՒՆՎԱՐԻ 2020թվականի N 03-Ա

ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 82-րդ հոդվածի 7-րդ մասով, «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով՝ Շահումյան համայնքի ավագանին.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

1. Հաստատել Շահումյան համայնքի 2019 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելված 1-ի:
2. Հաստատել 2019 թվականին Շահումյան համայնքի զարգացման հնգամյա ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն հավելված 2-ի:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՔՈՒԼՅԱՆ ՍԵՎԱԿ

ԲԵԺԱՆՅԱՆ ԱՐԵՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԵԼԵՆԱ

ՂՈՒՄԱՇՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

Համայնքի ղեկավար՝ ԷԴԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Հավելված 1
Շահումյան համայնքի ավագանու
2020թ-ի հունվարի 24-ի թիվ 03-Ա որոշման

ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2019Թ-Ի ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

h/h	Եկամուտների անվանումը	2018թ. Բյուջե			2019թ. Բյուջե		
		պլան	փաստ.	կատ %	պլան	փաստ.	կատ %
1	Հողի հարկ	3427,0	2708.8	79	3244,6	2821.9	87%
2	Գույքահարկ	4623.2	4796.5	103.7	5981.5	5890.2	98.5%
3	Տեղական տուրք	210,0	232,0	110,5	183.5	189.7	103.4%
4	հողի վարձ. վճար	1000,0	1228,7	122,9	1300.0	1701.0	130.9%
5	Այլ ոչ հարկային եկամուտներ	210,0	320,0	152,3	300.0	275.0	91.7%
6	Տեղական վճարներ	1170,0	1368,8	116,9	2370.0	2500.7	106%
	Ընդամենը սեփական եկամուտներ	10640,2	10654,8	100,1	13379.6	13378.5	100%

Սեփական եկամուտներ

Շահումյան համայնքի սեփական եկամուտների հավաքագրումը 2019թ. 13379.6 հազար դրամ պլանի դիմաց կազմել է 13378.5 հազար դրամ կամ 100.0 %, 2018թ.-ին փաստացի հավաքագրումը կազմել է 10654,8 հազար դրամ կամ 100.1%: Սեփական եկամուտների փաստացի մուտքերի համեմատությունը 2018թ-ի նկատմամբ կազմել է 125,6 %, կամ նախորդ տարվա նկատմամբ ավել է հավաքագրվել 2723,7 հազար դրամ:

Հողի հարկ

2019թ. Շահումյան համայնքում հողի հարկի հավաքագրումը 3244.6 հազ. դրամ պլանի դիմաց կատարվել է 2821.9 հազար դրամ կամ 87 %, 2018թ.-ին փաստացի հավաքագրումը կազմել է 2708.8 հազար դրամ կամ 79%: 2018թ.ի համեմատությամբ հավաքագրումը կազմել է 104.2 %, կամ նախորդ տարվա համեմատությամբ ավել է հավաքագրվել 113.1 հազար դրամ, ավել հավաքագրումը կատարվել է նախորդ տարվա պարտքերից գանձումների հաշվին: Հողի հարկի հավաքագրման ցածր տոկոսը

կախված է այն հանգամանքից, որ մեծ թվով սեփականատերեր բացակայում են համայնքից:

Գույքահարկ

2019թ. Շահումյան համայնքում գույքահարկի 5981.5 հազար դրամ պլանի դիմաց հավաքագրվել է 5890.2 հազար դրամ կամ հավաքագրումը կատարվել է 98.5% -ով, 2018թ. հավաքագրումը կազմել է 4796.5 հազար դրամ կամ 103.7%: 2018թ.ի համեմատությամբ հավաքագրումը կազմել է 122.8%, կամ նախորդ տարվա համեմատությամբ ավել է գանձվել 1093.0 հազար դրամ, որը պայմանավորված է համայնքում փոխադրամիջոցների ավելացման հետ:

Տեղական տուրքեր

Տեղական տուրքերի հավաքագրման մակարդակը կազմել է 103,4%, կամ նախատեսված 183.5 հազ. դրամի դիմաց հավաքագրվել է 189.7 հազ. դրամ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ կազմում է 81.8 %, կամ փաստացի հավաքագրումը 2018թ. նկատմամբ պակաս է 42.3 հազար դրամով: Թվով 6 խանութներից գանձվել են՝ ոգելից խմիչքի և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության և 2 ռեստորանային համալիրներից՝ հանրային սննդի օբյեկտներում ոգելից խմիչքի իրացման թույլտվության համար տեղական տուրքեր:

Հողի վարձակալություն

2019թ. համայնքում հողի վարձակալության հավաքագրումը 1300,0 հազ. դրամ պլանի դիմաց կատարվել է 1701.0 հազար դրամ կամ 130.9 %, 2018թ.-ին հավաքագրումը կազմել է 1228.7 հազար դրամ կամ 122.9 %: 2018թ.ի համեմատությամբ հավաքագրումը կազմել 138,4%, կամ ավել է հավաքագրվել 472.3 հազար դրամ, ավել հավաքագրումը կատարվել է նախորդ տարիներից կուտակված պարտքերից գանձումների հաշվին:

Տեղական վճարներ

Տեղական վճարների մեջ մտնում է աղբահանությունը, ծնողական գումարը, անասնաբուժական ծառայությունը, աճուրդի և մրցույթի մասնակցության վճարներ և այլն:

Տեղական վճարները 2019թ. համար նախատեսված 2370,0 հազ. դրամի դիմաց փաստացի հավաքագրվել է 2500,7 հազ. դրամ, կամ կատարվել է 106,0 %-ով: 2018թ-ի համեմատությամբ հավաքագրումը կազմել 182,7%, կամ ավել է հավաքագրվել 1131,9 հազար դրամ: Որից՝ 2019թ-ին աղբահանության համար նախատեսված 800,0 հազ. դրամի դիմաց փաստացի հավաքագրվել է 849,8 հազ. դրամ, կամ կատարվել է 106,2 %-ով: Ծնողական վճարների համար նախատեսված 960,0 հազ. դրամի դիմաց փաստացի հավաքագրվել է 1195.1 հազ. դրամ, կամ կատարվել է 124.5 %-ով: Պլանը գերազանցվել է,

քանի որ խմբակների երեխաների թիվը ավելացել է: Անասնաբուժական ծառայության համար նախատեսված 600,0 հազ. դրամի դիմաց փաստացի հավաքագրվել է 343,8 հազ. դրամ, կամ կատարվել է 57,3 %-ով: Տույժ տուգանքների համար նախատեսված 10,0 հազ. դրամ եկամտի դիմաց փաստացի հավաքագրում չի կատարվել:

2. 2019Թ-ԻՆ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՍԵԼԱՎԱՏԱՐԵՐ

Իրականացվել է բուժ. ամբուլատորիային հարակից հեղեղատարի, թվով 3 սելավատարերի, 2-րդ փողոցի թիվ 59 տնից վերև մոտ 100 մետր երկարությամբ հեղեղատարի մաքրման աշխատանքներ՝ ընդհանուր 600.0 հազար դրամ արժողությամբ: Իրականացվել է նաև Շահումյան համայնքի միջթաղամասային ճանապարհի /Դավթյան Լավրենտի տան մոտից/ ջրահեռացման համակարգի բարելավման աշխատանքներ՝ ընդհանուր 200.0 հազ. դրամ արժողությամբ:

ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐ

Կառուցվել է 8 փող. 4 փկղ. թիվ 10 տանը հարակից հենապատ՝ արդյունքում վերականգնվել է փլուզված ճանապարհը և բացվել 7 տնտեսության ելումուտը: Ծրագրի արժեքը 843.9 հազ. դրամ:

Իրականացվել է համայնքի 8-րդ փողոցի, 8 փող. 4 փակուղու և 8 փող. 1-ին նրբանցքի ճանապարհի ընթացիկ նորոգման և փոսալցման աշխատանքներ՝ 987.6 հազ. դրամ արժողությամբ:

Ներհամայնքային գրեթե բոլոր ճանապարհներում իրականացվել է ասֆալտի քերուկների փռման և հարթեցման աշխատանքներ, որի համար ծախսվել է 650.0 հազ. դրամ:

Ֆոնդային բյուջեից իրականացվել է համայնքի ,,Ղազախի թալա,, հանդամաս գնացող դաշտամիջյան ճանապարհի հիմնանորոգման աշխատանքներ ընդհանուր արժեքը՝ 1896.0 հազ. դրամ:

Իրականացվել է համայնքի 2-րդ և 5-րդ փողոցների հատման կետից դեպի հանդամաս գնացող ճանապարհի և 2 փող. 1-ին նրբանցքի փոսային նորոգման և ճանապարհի հարթեցման աշխատանքներ ընդհանուր արժեքը՝ 2465.0 հազ. դրամ:

ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ

Աղբահանությունն իրականացվում է համայնքի սեփականությունը հանդիսացող բեռնատար ինքնաթափ մեքենայով, շրջիկ ձևով՝ շաբաթական 2 անգամ: Աղբահանության իրականացման՝ մեքենայի պահպանման և վառելիքի համար ծախսվել է 894.0 հազ. դրամ:

Իրականացվել է Դիլիջան մայրուղու և նոր գերեզմանատան հարակից տարածքի մաքրման և աղբահանման աշխատանքներ ՝ 250.0 հազ դրամ արժողությամբ:

ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ

Անուշ ջրագծի հետադարձ խողովակաշարի բացման, ջրամբարի մաքրման, ինչպես նաև Անուշ ջրագծի ակունքի մաքրման համար ծախսվել է 250.0 հազ. դրամ:

ՓՈՂՈՑՆԵՐԻ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Փողոցների լուսավորության սպասարկման և պահպանման համար ծախսվել է 450.0 հազ. դրամ, որի մեջ մտնում է սպասարկում իրականացնողի մատուցած ծառայության վճարը, լամպերը և մալուխները: Լուսավորության էլեկտրաեներգիայի ծախսը կազմում է 600,0 հազ. դրամ:

2019թ-ին իրականացվել է Շահումյան համայնքի գիշերային լուսավորության համակարգի հիմնանորոգում սուբվենցիոն ծրագիրը, որի արդյունքում համայնքի գլխավոր փողոցներում, մոտ 4 կմ երկայնքով, տեղադրվել են թվով 104 հենասյուներ և 108 լեդ լուսատուներ: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմել է 13821,5 հազ. դրամ, որից 8292,2 հազ. դրամը հատկացվել է պետության կողմից որպես սուբվենցիա, իսկ 5529,3 հազ. դրամը ներդրվել է համայնքի բյուջեից:

<<ԿՐԹԱՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ>> ՀՈԱԿ

,,Կրթամարզամշակութային համալիր,,-ի մեջ մտնում են մշակույթի տունը և մանկապարտեզը: Մշակույթի տանը գործում են երգի, պարի, ըմբշամարտի, կերպարվեստի, դիզայնի, կավագործության և կիթառի խմբակներ, ուր հաճախում են մոտ 96 երեխա, գրադարանը և կիրակնօրյա դպրոցը:

Մանկապարտեզը գործում է 2018թ-ի սեպտեմբերից, հաճախում է 25 երեխա:

Կրթամարզամշակութային համալիրի պահպանման, աշխատակազմի աշխատակիցների աշխատավարձի, երեխաների սննդի և այլ ծախսերի համար համայնքի բյուջեից տրվել է դրամաշնորհ՝ 19 988.0 հազ դրամ:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Համայնքում մշտապես իրականացվել են բազմաբնույթ միջոցառումներ կապված տոնական և հիշատակի օրերի հետ: Հունվարի 28-ին՝ հայկական բանակի օրվա կապակցությամբ զոհված ազատամարտիկների ընտանիքներին հատկացվել է դրամական օգնություն:

Մայիսի 9-ին եռատոնի կապակցությամբ պատերազմի մասնակիցներին և ազատամարտիկներին ևս տրվել է դրամական օգնություն:

Ամանորին կազմակերպվել է միջոցառում և համայնքի 1-9 տարեկան երեխաներին տրվել են ամանորյա տոպրակներ: Համայնքի օրվա և Սբ. Հակոբ եկեղեցու օծման օրվա կապակցությամբ կազմակերպվել է միջոցառում: Տարվա ընթացքում մշակութային միջոցառումների վրա ծախսվել է 1080,0 հազ. դրամ:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Առաջին դասարան հաճախող թվով 36 երեխաներին հատկացվել է դպրոցական պարագաներ և գրենական պիտույքներ՝ ծախսվել է 468 հազ. դրամ: Գուգարաց թեմի

առաջնորդարանի կողմից կազմակերպվել է կնունքի արարողություն և կնքվող երեխաներին տրվել է արծաթյա խաչեր:

Թվով 14 շրջանավարտներին հատկացվել է հուշանվերներ՝ ծախսվել է 203 հազ. դրամ:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ

2019թ-ի ընթացքում համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին հատկացվել է 1700,0 հազ. դրամ սոցիալական օգնություն:

ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Համայնքը սպասարկում է մեկ անասնաբույժ, որի կողմից մատուցված ծառայության համար բյուջեից վճարվել է 660,0 հազ. դրամ:

Շահումյան համայնքի ղեկավար՝ Է. Մանուկյան

Հավելված 2
Շահումյան համայնքի ավագանու
2020 թ-ի հունվարի 24-ի թիվ 03-Ա որոշման

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Շահումյան համայնքի 2017-2021թթ. սոցիալ տնտեսական զարգացման հնգամյա ծրագրում ընդգրկված թվով 7 առաջնահերթ խնդիրներից (ծրագրերից) լիովին իրականացվել են 4-ը, 1 ծրագիրը իրականացվել է մասամբ, 2-ը դեռևս չի իրականացվել, սակայն 2020թ-ին նախատեսվում է իրականացնել կենտրոնական ճանապարհի մի հատվածի ասֆալտապատում: 2019թ-ին իրականացվել է ,,Շահումյան համայնքի գիշերային լուսավորության համակարգի հիմնանորոգում և բարելավում,, ծրագրերը: Համայնքի մոտ 4 կմ գլխավոր ճանապարհների երկայնքով տեղադրվել են 104 հենասյուներ, որոնց վրա ամրացվել են 108 լեդ լուսատուներ: Արդյունքում լուծվել է արտաքին լուսավորության խնդիրը, որը դրական առումով ազդել բնակիչների կյանքի որակի վրա, երեկոյան ժամերին բնակիչների տեղաշարժը դարձել է դյուրին: Աշխատանքն իրականացվել է սուբվենցիոն ծրագրով, որի ընդհանուր արժեքը կազմել է 13821,5 հազ. դրամ, որից 8292,2 հազ. դրամը հատկացվել է պետության կողմից որպես սուբվենցիա, իսկ 5529,3 հազ. դրամը ներդրվել է համայնքի բյուջեից:

Շահումյան համայնքի ղեկավար՝ Է. Մանուկյան